Խաչիկ Ասրյանի պարտավորությունների կատարումն ապահովվելու նպատակով, վերջինիս համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-21 15:10:04

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

20.10.2026թ ին նշանակված Խաչիկ Ասրյանի պարտավորությունների կատարումը ապահովվելու նպատակով վերջինիս համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով:
17.11.2026թ ժամը 14:00-ին Խաչիկ Ասրյանի սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի կողմից Երեւան քաղաքի Արշակունյաց 5 շենքի 109 դահլիճում կանցկացվի Խաչիկ Ասրյանի պարտավորությունների կատարումն ապահովվելու նպատակով, վերջինիս համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ՝ բաց դասական եղանակով մեկ առանձին լոտով: Աճուրդը անցկացվելու է ՀՀ Արդարադատության նախարարի 16.02.2020թ., թիվ 116-ն հրամանի կարգով : Լոտ 1-ը իրենից ներկայացնում է Խաչիկ Ասրյանի պարտավորությունների կատարումն ապահովվելու նպատակով, ընդհանուր համտեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, որը գտնվում է ք Երևան Վ Շենգավիթ 2-րդ փողոց, 5 շենք 30 բնական, հասցեյում, 9 հարկանի շենքի 2-րդ հարկում : Միջնահարկի բարձրությունը՝ 2.70մ, մակերեսը 111,7 քմ, մուտքի դուռը երկաթյա, ներսի դռները ՄԴՖ, պատուհանները՝ Մետողոպլաստե, ներքին հարդարումը՝ միջին, հատակը՝ մանրահատակ, միջանցքը սալիկ, ընդհանուր գնահատականը 4 բալ, սանհանգույցը և լոգարանը միջին վիճակում, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 2437043 վկայական, տրված 22.03.2010թ. : Ընդհանուր առմամբ բնակարանի ներքին հարդարումը գտնվում է միջին վիճակում :
Լոտ 1-ի մեկնարկային գինը՝ 30.705.548 ՀՀ դրամ/եռեսունմիլիոնյոթհարյուրհինգհազարհինգհարյուրքառասունութ ՀՀ դրամ /:
Ծանոթություն աճուրդի ներկայացված լոտը՝ անշարժ գույքը փաստացի բնակեցված է բնակիչներով, որի ազատման գործողությունները /վտարման/ և գույքի ձևակերպման ծախսերը կատարվում է գնորդի կողմից: Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճեն, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի

դեպքում դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը: Մասնակցության վճարը և նախավճարը կազմում է լոտի գնի համապատասխանաբար 1%--ը և 5%-ը, սակայն մասնակցության վճարի գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը պետք է մուծվի <<Արդշինբանկ>>ՓԲԸ ՈՒ/Մ բացված Խաչիկ Ասրյանի սնանկության հատուկ հաշվին՝ h/h 2475003540940000: Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ ք. Երևան Ե. Օտյան 53/2: Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձիք, աճուրդին ներկա գտնվելու համար վերը նշված հաշվե համարին վճարում են մուտքի վճար, որի չափը չի կարող գերաղանցել նվազագույն աշխատավարձի տասնապատիկը: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտն ուսումնասիրելու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են դիմել Խաչիկ Ասրյանի սնանկության գործով կառավարիչ Մ.Հայրապետյանին, հեռ. 091-40-79-15 կամ այցելել ք.Երևան, Արշակունյաց 5շ. 416 սենյակ:

37491407915

mayis.hayrapetyan.2015@mail.ru

ք.Երևան, Արշակունյաց պող.5, 416 սենյակ